

1580

1085

24 20

917

1508  
/

1883

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՊԱՏԱՐԱԳԻ ՕՐԵՐՆ ԵՒ ՏԵՍԱԿՆԵՐ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ



ՊԱՏԱՐԱԳԻ ՕՐԵՐՆ

ԵՒ ՏԵՍԱԿՆԵՐ

Ի Հ. ՎԱՐԴԱՆԱՅ ՀԱՅՈՒՆԻՈՅ

Ի ՄԻԻԹ. ՈՒԽՏԷՆ

1580




Ի Ս. ՂԱԶԱՐ ՎԵՆԵՏԻՈՅ

ՌՅԽԷ — 1898

ՀԱՅ ԵԿԵՂԵՍԵՈՅ

ՊԱՏԱՐԱԳԻ ՕՐԵՐՆ ԵՒ ՏԵՍԵՎԵՐ



**Բ**ԱՉՄԱՎԻՊԻ ՍՈՒՐՀԱՆԴԱԿՆ 1897  
տարւոյ աւղոստոսին այս նիւթիս վերայ ըրա-  
մի հարցումն, որոյ պատասխանը լինի առաջի-  
կայ համառօտ գրութիւնս. որ յետ հրատա-  
րակուելու նոյն հանդիսի մէջ՝ հոս առանձին  
այլ ապագրի ի գիւրութիւն ընթերցողաց: Զի  
յիրաւի կարեւոր խնդիր մ'է այս, նկատելով  
ս. պատարագի մասուցման արդի պայմանը  
եւ ոմանց այնոր մասին ունեցած անձիշդ տե-  
սութիւնքը. ուստի եւ արժանի ծանօթացնե-  
լու ազգիս:

Իմ հոս գործածած աղբերաց ազգայիններ-  
ըէն շատերը վաւերական են, եւ ոմանք կա-  
րօտ քննութեան՝ որոց իւրաքանչիւրին վերայ  
երկարաբանել չներէ գրութեանս չափը. մա-

նաւանդ որ այնոց տկարութիւնն ամրացնեն յարակից վաւերականք, որոց մէջ թէ բազմութեամբ եւ թէ հաստատութեամբ նշանաւոր են արձանազրութիւնք հին եկեղեցեաց: Իսկ քննեալ սովորութեանց ծագման կամ բարձման ժամանակները՝ զորս զծեմ, չեմ կարող պնդել՝ թէ բացարձակ են. եթէ կան ինձ անծանօթ լաւադոյն ազրեբք, կրնան անշուշտ փոփոխել իմ զրոժ սահմանները:

### Խնդիր Ա.

Արդեօք հայկական եկեղեցոյ պաշտօնեայք յընթացս դարոց՝ բաց ի տերուակասն տօնից՝ միայն կիւրակէ՛ եւ շարսօր օրերը պարտաւոր էին պատարագել, րի նա եւ սրբոց տօնից օրերը:

Ա. Հոս մեր միտք բնականապէս ձկտի նախ դէպ ի սկզբնական զարեբը մեր եկեղեցոյ: Եւ որովհետեւ ազգիս այդ ժամանակաց սովորութեանց բանալեաց մին է ծանօթութիւնն ընդհանուր եկեղեցոյ հին սովորութեանց, ուստի հարկ է որ նախ զայնս յիշատակեմ համառօտիւ:

Քրիստոնէութեան սկիզբները կիւրակէն էր սահմանուած պատարագի: Առաքելոց զործոց մէջ յիշուի պատարագ մի կիրակէի յառաջընթաց զիշերը. «Յառորն շարարոց մինդեռ ժողովեալ էաք թեկանել զհացն, Պաւղոս խօսէր... մինչեւ ի մէջ գիշերոյն... Եւ ել երեկ զհացն» (Ի, 7-11): Կղաւղ. Փլորի Քրիստոնէից կենցաղին մէջ պատմէ՝ թէ ուրբարն այլ ժողովէին պատարագել (Գ, ԹԱ), թուի յիշատակաւ պատարագի փրկչին ի խաչի: Այնուհետեւ ըստ կամս վիճակաց կամ եկեղեցեաց սկսին աճել պատարագի աւուրք: Յիշեալ երկուց վերայ Բ դարուն առաւելու չորեքշաբարին այլ ըստ Պեղիկիայ (Ա, 247): Յելս Դ դարուն Սեբեթիանոս եմեսացի իւր ճառից մէջ յիշատակէ այդ երեք օրերը (Ե, 91): Ոսկեբերան փոխանակ չորեքշաբաթի՝ շարար զնէ ի մեկն. Ա Տիմ. «Յուրբարոս եւ ի շարարոս եւ ի կիւրակէի եւ ի մարտիրոսաց յիշատակս նոյն զենումն զենու, նոյն խորհուրդ կատարի» (Ե, 47): Ս. Բարսեղ առ Կեսար պատրիկ թղթոյն մէջ յիշեալ չորս օրն այլ պատարագելի զնէ (Թղթ. ՄՁԹ): Ս. Աւգոստին այլ առ Յանուար թղթին մէջ աւանդէ՝ թէ ոմանք զեռ միայն կիրակէ պա-

տարագէին, ոմանք նա եւ շարաթ\*, եւ ոմանք ավեկ օր (թղթ. ԾԴ) : Հանապազօրեայ պատարագն արեւմտեայց մէջ ընդհանրացած է Զ դարուն ըստ գեղասեան եւ զրի-գորեան սահմանայ :

Ք. Մեր եկեղեցին հիմնուելով Դ դարու այլ անհաստատ շրջանի մէջ, ո՞ր սուրբութեան հետեւէր արդեօք նոյն ժամանակներն եւ յետոյ :

Փաւստոս այս տեղեկութիւնս աւանդէ Դ դարու մասին. « Զայնու ժամանակաւ երթեալ հասանէր եպիսկոպոսապետն Վլթմանէս ի մեծն յառաջին ի մայրն եկեղեցեացն հայոց, որ էր յերկրին Տարօնու . . . Սա երթեալ կատարէր անդ՝ ըստ հանապազ սովորոշքեանն՝ . . . զպատարաքն գոհութեան » (Գ, Գ) : Այս բառերս « ըստ հանապազ սովորութեանն » [թուի թէ չկարեն նշանակել ավեկ օր, որպէս հասկանայ զայդ Ե դարու վերայ՝ բազմահմուտն հ. Յոյս. Գաթրճեան ի Սրբզն. պարզմտոյցս . հայոց (Գ, 104) : Զի նախ՝

\* Հին հգնաւորք այլ հաղորդէին մեայն կիւրակէ, կամ շաբաթ եւ կիւրակէ, յորս պատարագ մատչէր (Վարք հրց. Ա, 216, 184-5 եւ այլն) :

Փաւստոս այդու Դ դարու սուրբութիւնն յիշեցնէ, եւ ոչ Եին. եւ երկրորդ՝ այդ « հանապազն » ավեկ օր հասկանալու համար հարկ էր որ Վլթմանէս ի Տարօն բնակէր. ուր ընդ հակառակն « երթեալ հասանէր » նա հոն, եւ այն՝ մի որոշեալ ժամանակի մէջ, « զայնու ժամանակաւ » : Ուրեմն « հանապազը » պարբերական շրջան մի ցուցնէ՝ եւ ոչ օրական. այն՝ զոր պարզէ ինքն իսկ Փաւստոս, յառաջ տանելով իւր խօսքը. « Քանզի այնպէս իսկ սովոր էին եպիսկոպոսապետքն հայոց, հանդերձ թաղաւորքն . . . յայն ի գլխաւոր տեղին յեկեղեցին ժողովել ի յիշատակ սրբոցն՝ որ էին անդ, կատարել ավի ավի եչքն ակգաւ » : Ահա այս էր հանապազ սովորոշքիւնը\* : — Գ. դարու մասին Փաւստոսի

\* Փափագելի էր՝ որ հ. Գաթրճեանի հմտալից գործոյն մէջ ուրիշ քանի մի կետեր եւս այլազոյ մեկնուած լինէին : Թողով զայլս՝ յիշեմ հօս իբր օրինակ կարեւորագոյն կէտը, որպիսին է Յհ. մանդակուհուայ հաղորդութեան հառին մի խօսքը մկրտութեան ջրոյ համար, զոր հ. Յովսէփ համարի ըսուած բաժակի ջրոյն վերայ — այնու հաստատելով սորա լինելն ի մեզ Ե դարուն — եւ խարդախուած օտարէ. եւ արգոյ հրատարակիչն հաստատէ նոյնը (67-9) : Ուր այդ խօսքը, որոյ

միւս խօսքը, « Իսկ եղև օր մի յաւուրց՝ իբրև կատարէին անդ զխորհուրդ զհնութեան պատարագին » (Ե, ԻԸ), ուղիւ մեկնէ նոյն

վերայ այնչափ հաստատութեամբ յենու հ. Գաթրճեան, Մանդակունին ինք չէ ստեղծած, այլ առած Ոսկեքերանի Մտթ. մեկնութենէն: Եւ թէպէտ խանդարուած է այն Մանդակունւոյն քով, բայց ոչ նենդութեամբ, զի Ոսկեքերանի բնագրին մէջ — ուստի եւ Մանդ. քով — ջուրը բուն մկրտութեանն է եւ էր: Տեղւոյս չէ կարգասրել Մանդ. ընթերցուածը. ուստի բաւականանամ միայն զնել զայն Ոսկ. բանից քով, որք զոյգ ընթանան յոյն բնագրին հետ:

ՄԱՆԴ. ԻԲ, 168

ՈՍԿ. ՄՏԹ. Գ, ԻԹ, 107

« Զի ոչ տեսանելի է ահաւորութիւն սուրբ խորհրդոյն, այլ իմանալի զօրութիւնն. քան զի ոչ ինչ տեսանելի աւանդեաց մեզ փրիտոտի խորհուրդն է — Գլուր — Գլուրն (Գթրճ. Եկամուտ համարի զայս), այլ իմանալի: (Գթրճ. յաւելու՛ հաց է — գինի է — Գլուր տեսանեմք, այլ աստուածային քանին հաշատարք որ ասեն՝ էթէ Այս է մարմին իմ եւ արիւն) »:

« Եւ քանզի քանկ ասէ՛ Այս է մարմին իմ, հաւանիմք եւ հաշատարք, զի իմանալի աչօք տեսանեմք զայն: Քանզի ոչ ինչ տեսանելի աշակերտաց մեզ փրիտոտս, այլ տեսանելի իրօք զիմանալիս ամենայն: Նոյնպէս է — Գլուրն — Գլուրն ի տեսանելի Գլուրն գործի պարգեւն »:

բանասէր հայրը՝ թէ « վասն զի ամէն օր պատարագի սահմանուած չէր » (101), եւ ոչ իսկ վանաց մէջ ուր կատարուէր այս պատարագ \*:

Նա եւ Ե դարուն հանապազօրեայ չէր պատարագն, ոչ առ աշխարհականս եւ ոչ առ վանականս: Ս. Սահակ իւր կանոնաց մէջ երկու տեղ խստիւ պատուիրէ քահանայից, որ « Պաշտօն սաղմոսերգօրքեանն անխափան կացցէ ի տուրնջեան եւ ի զիշերի » (Սոփերք, Բ, 81), որ « Զամառն զխաւօր քահանայն հանապազօրեալ յեկեղեցւոյն կացցէ, եւ այլ ընկերքն շարաթուք առ նմա փոխանակաւ կացցեն, զի պաշտարանըն (ժամերգ.) տուրնջեան եւ զիշերոյ մի խափանեսցին » (անդ, 91): Այսպէս խօսի լոկ հանապազօրեայ ժամերգութեան վերայ. իսկ մեծագոյն եւ վեհագոյն պաշտօն պատարագին նոյնպէս հանապազօրեալ կատարուելու հրահանգ չընդունի հայրպետէս: — Նոյն ինքն իւր բնակութեան մէջ հաստատեց մի վանական կարգ խստակրօն անձանց, « Որովք մշտնջենաւոր պաշտամամբ կատարէր զկանոնն (ժամերգ.) որպէս զայն որ յանապատսն էին » (Խորեն. Գ, ԽԹ),

\* Տես եւ ծանօթութիւնն յէջ 8:

այլ շխշուի թէ պատարազն այլ կատարէր «մշանջենաւոր պաշամամբ» : Անյիշատակութիւնն հոն ոչք յիշելի էր՝ նշան եւ փաստ է պակասութեան շխշեալ իրին :

Պ. Ուրեմն ո՞ր օր կամ օրեր պատարագէին այդ ժամանակներ : Ե դարու երկրորդ կիսուն ԹՆ. մանդակունի աւելի բացայայտ վկայութիւն մի տայ մեզ՝ որ ցրուէ ամէն տարակոյս : Նա հաղորդութեան ճառին մէջ խօսելով նոցա գէմ՝ որք մեծ տօնից մէջ միայն հաղորդիլ ուզէին, յաւելու նմանութեամբ Ոսկերերանի բացատրութեան, զոր տեսանք ի յօգուածն Ա. «Չի յոչրարուս եւ ի կիշրակէին եւ ի տօնս պենտեկոստէիցն եւ զատկացն մի գենումն է, եւ նոյն խորհուրդ կատարի» (ԻԲ, 170, տպ. Բ) : Այսպէս փոփոխելով Ոսկերերանի խօսքը՝ ցուցնէ թէ զայն յարմարեցուցեր է հայ ազգի սովորութեան, որ է եօթնեկի մէջ լոկ երկու օր՝ ուրբաթ եւ կիրակիէ պատարագել\* : Ոսկերերանի «շաբաթը»

\* Մանդակունւոյն այդ ճառն՝ ինչպէս եւ այլք՝ ի զբազարաց ոմանց ընծայուելին Եփրեմի կամ Ոսկերերանի. որոց հակառակ արբարացի փաստիւք վաւերացոյց զայնս միաբանակիցս հ. Բրս. վ. Սարգսեան՝ ի քննադատ. նոցին : Ման-

Մանդակունւոյն ոչ մի զբազարի մէջ չկայ, դուրս թողուած է մեր հայրապետէն, ուրեմն ազգի սովորութեանն այլ դուրս էր. ինչպէս եւ այլոց չորեքշաբաթին կամ այլ օրեր. եւ այդ փաստն ինչ է այնու մանաւանդ, զի յար եւ նման է՝ ուստի եւ շարունակութիւնն՝ եկեղեցւոյ հնագոյն սովորութեան, զոր տեսանք յառաջ վկայութեամբ Փրորեայ\* : — Եթէ Ն դարուն այդպէս, բնականօրէն նա եւ Գին նոյն սովորութիւնն էր ի մեզ, կիրակիէն զատ

զակունւոյն ներկայ վկայութիւնս այլ մի փաստ ընծայէ ի՞նչ ճառին հարազատութեան. սա ուրբաթը պատարագելի զին. իսկ այդ կարգը Չ դարուն արդէն փոխուած էր, ինչպէս պիտի տեսնեմք այժմ. ուրեմն ճառք Ն դարուն է գրուած. իսկ Եփրեմի չէ, ըստ որում իւր մէջ գտուած այս վկայութիւնս Ոսկերերանէն է. չէ եւ սորա, զի յիշեալ վկայութիւնը տարածայն է սոյն ս. հօր աւանդած սովորութեան :

\* Ուրեմն եւ Եղիշէի խօսքը՝ թէ Քրիստոս «հանապազ հացանայ յեկեղեցիս» (մտնոր. 223, տպ. Ա), չէ կարելի հասկանալ առեւ օր ըստ Գթրճ. զի արդէն այդ իմաստը բացարձակ չէ հանապազիւն : Մանդակունին այլ ըսէ՝ թէ «քահանայն... միշտ պատարագ մատուցանէ հանապազ վասն քս» (Ժ, 95), բայց այդ հանապազն ահա ուրբաթ եւ կիրակիէ միայն է :

ուրբաթն այլ պատարագուէր : Եւ այս չէ առանց հիման . Հռիփսիմեանց համառօտ պատմութեան մէջ՝ յանուն Խորենացոյն՝ կարգամբ . « Ի լեառն Վարագ . . . երկուք ոմանք ի քահանայիցն սրբոց բնակեցան . . . Եւ տեղիք նոցա կոչին Ուրբաթայրք . քանզի ի յոչրբարե յոչրբար մատուցանէին զսրբբութեամբ պատարագն եւ բաշխէին » կուսանաց \* (մտնգր. 302, ապ. Բ) : Զոր հասկանալի է՝ թէ միայն ուրբաթ պատարագէին, բայց մասնական սովորութեամբ . զի ոչ մի հանրական սովորոյթ չներէր անպատարագ թողուլ զկիրակէն :

Պ. Կ և Ե վարք տէրունի տօներէն եւ այդ երկու օրերէն զատ ունէին պատարագի այլ օրեր եւս : Փաւստոս գրէ . « Սոյնպէս եւ

\* Մանդ. ԻԲ հռոին համար ըրած ձեռնարկութիւնս այդոր այլ յարմարի . այս ինքն՝ թէ ուրբաթու պատարագն արդէն Ձ դարուն վերջացած էր մինչեւ Թ դար . հետեւաբար Խորենացոյն այդ դրութիւնը պարտի լինել կամ Ե դարուն, կամ նոյնչափ հին յիշատակարանի վերայ հիմնուած, զատ ի Գաւթէ հոովմայեցւոյ եւ ազգային . զի տեղ մի այսպէս խօսի առ հայ ընթերցողն . « Որում ես եւ դու հասու, եւ մեզ երկրորդել զի՞ է » (300) :

յառաքելարանս տեսունաշակերտացն , սոյնպէս եւ ի վիպարանս մարտիրոսացն ամի ամի ժողովեալք , զօր տօնիկ յիշատակի նոցա . . . խմբեալ ցնծային » (Գ, Գ) « պատարագաւ » եւ այլն : Զայս տօներս այսպէս պատուէր եւ մեծն Ներսէս (Փաւստ. Գ, ԺԵ) : Գրէ եւ ս . Սահակ . « Սեղանն ամենայն ուրեք տէրունական ասի եւ պատարագն . բայց միայն տօնիւքն զանազանին , զի իւրաքանչիւր տեղու՞ սովորութիւն է կատարել զկարգ տօնիցն » (Սոփ. Բ, 107), ինչպէս ընէին եւ այլ ազգեր (Փլորի, Գ, ԺԱ) : — Այս տեղեկութիւնք անա լուծեն այն հարցն ի սկիզբն խնդրոյս՝ թէ նա եւ սրբոց տօնից պատարագ մատչէր . թէպէտ եւ հայկական հին տօնացուցի սուրբք շատ սակաւ լինելով\*, ըստ այնմ՝ իրեանց պատարագներն այլ սակաւ էին :

Ե . Բաց աստի՛ նա եւ « Մեծ քահանայապետն Վրթանէս երթեալ շրջէր առանձինն սակաւութեամբ՝ կատարել զպատարագն օրհնու-

\* Կազմէին իբր քառասուն եւ վեց տօն . (տես ի Մշտնջ . պրդտօմ . վեհետ . 5) . եւ բազմացան ժԱ դարուն ի ձեռն Գր . վկայասիրի . (Յշտկր . ի Վարս սրբոց հ . Աւգեր . ԺԱ , յէջ 25-Թ) :

թեան» (Փաւստ. Գ., Գ). յայտնի չէ՝ յա-  
տուկ թէ որ եւ իցէ որ որ հանդիպէր : Բայց  
թէ այսպէս եւ թէ այնպէս, յայտնի է՝ թէ  
այցեղու հայրապետին առանձնական սովորու-  
թիւն մի ցուցնէ այդ, եւ ոչ թէ բոլոր եւ  
կեղեցականաց սեպհական :

Ձ. Յաջորդ Ձ դարու մէջ սկսին փոփո-  
խութիւնք. եօթնեկի մէջ դեռ երկու օր պա-  
տարագ կայ, բայց ուրբաթու պատարագն ի  
շաբաթ անցնի. միանգամայն այլ եւ այլ կող-  
մեր զեղծումն այլ մտնէ շաբաթու եւ կիրակէի  
պատարագները զանց անելու : Այս բոլորը  
զանեմք յիշուած Գունայ Բ ժողովոյն (յամին  
527) պատուիրանիս մէջ. «Քահանայք զշա-  
բաթոս պատարագ եւ զկիրակէի մի իշխես-  
ցեն խափանել, որպէս տեսաք ի բազում  
տեղիս» (կան. Ձ). եւ թէ «ի պատարագէ  
կիրակէից եւ տօնից մի իշխեսցեն ծուլանալ  
մնալ ի սունս իւրեանց» (կան. Ը) :

Նոյն երկու օրն յառաջ երթայ մինչեւ Ը  
դար. հոս գրէ Յհ. իմաստասէր, թէ դեռ  
«Յարձակ աւուրսն քրիստոսեանն ոչ մատչի  
պատարագն» (մտնդր. 91). եւ միւս կանո-  
նէն՝ թէ «Արժան է ի սուրբ քառասներորդս  
պահոցն՝ յաւուր շաբաթոս եւ կիրակէի պա-  
տարագ մատուցանել» (25), իմանամք՝ թէ

արաքոյ պահոց եւս այդ օրերն էին պա-  
տարագելի : Տես եւ ի յօդ. Ը :

Ե. Քննելի է թէ ինչու շաբաթ պատարա-  
գէին : Տեսանք թէ սուրբք պատարագաւ սօ-  
նուէին ի սկզբանէ : Նոքա յառաջ մեր ազգի  
մէջ նման այլ եկեղեցեաց տօնուէին իւրեանց  
վկայութեան օրերն անխտիր, եւ ոչ թէ լոկ  
եօթնեկի չորս աւուրց մէջ ըստ այժմուս\* :  
Բայց յետ Ե դարու սովորութիւն մտնէ տօնել  
միայն շաբաթ օրերը : իմաստասէրը խօսելով  
սաղմոսաց եօթն գութաղայից վերայ, գրէ.

\* Հին հաշոցն եւ տօնացոյցն՝ ամսոց աւուրց  
հետ կապեն սրբոց տօները : Փաւստոս գրէ՝ թէ  
«կիրակէ» օր մի կարագետին տօնը կատա-  
րուէր (Գ, ԺԵ) : Եւ 1284 տարւոյն տօնացոյց  
մի մեր գրչազրատան՝ նոյն տօնին համար, որ  
կապուած էր նաւասարդի առաջին աւուր հետ,  
հրահանգ տայ. «Եթէ աղուհացիցն հանդիպի  
կամ ի կիրակէի կամ յառաջաւորն, դու ա-  
ռաւաւտուն զիւր սղմ. եւ զընթերց. եւ զաւետոր-  
կարգա. եւ թէ ուտիս հանդիպի՝ տաւն արա» :  
Եւ հին պատարագաց մի հաւաքածոյի մէջ,  
զրուած յեւս ԺԳ դարու կամ ի մուսոս ԺԳին,  
կարգամք այս խրատը. «Ձաւագ շաբաթին եւ  
զզատկին առաջի շաբաթին զսրբոց տաւնսն  
թուեա եւ յաղուհացիցն յերկրորդ եւ յերրորդ  
շաբաթն կատարեա» : — Այս եւ իմաստասի-

«վեցն՝ ըստ վեց աւուրցս տարժանմանց. իսկ եօթներորդն՝ զգլուխն եւ օր կատարման, յորոշմ աշուր եւ սուրբքն ճգնեալք ի ֆրիստոս պսակիև» (84). Եւ այլուր խօսելով շաբաթ աւուր վերայ, յաւելու. «Յորում եւ մարտիրոսացն հանդիսից յիշատակն պատմի» (89): «Յորում աւուր է. . .», «յորում է. . .», ուրեմն այլ աւուրց մէջ ոչ: Եւ յիրաւի գնելով նա հինգ աւուրց առաւօտու երգ (յես փառք ի բարձանց) արդի պահոց երգերը, միայն շաբաթուն մարտիրոսաց զնէ, որ է այժմ անգործածելի Առաքեա տէր ըզլոյսն Ակ ձայն (88-9): Հնոց տօնած սրբոց սակաւութիւնն այլ կարելի ընէր զայդ: Արդ՝ սրբոց ի շաբաթ ամիոփուելովն՝ ուրբաթու պատարագն այլ ի շաբաթ անցած թուի:

Ը. Իմաստասերն աւանդէ՝ թէ շարունակ պատարագ մատչէր նա եւ «ի սուրբ քառաս-

ըին ըսածներէն առ այժմ այս հետեւութիւնը կարելի է ինձ հանել: Ի սկզբան որ եւ էցէ որ տօնուէին սուրբք՝ ըստ Փաւստոսի. յետոյ շաբաթ աւուրց մէջ ամիոփեցան՝ ըստ Աւձնեցւոյն, ապա դարձեալ ցրուեցան՝ ըստ միւս երկու զրչագրաց, եւ հօսակ յետոյ դուրս թողուեցան միայն տէրունի եւ պահոց օրերէն՝ ըստ նոր սովորութեան:



ներորդս զատկին եւ մինչեւ ի սուրբ պենտակոսաէն... (զի) ամենայն օր կիրակէ է, եւ ի նոսա կատարի աստուածային խորհուրդն» (25): Թէ կիրակէ չիւնէր, պիտի չմատչէր:

Ք. Աւձնեցւոյն յաջորդ դարուց մէջ կամ լաւ եւս յետ իւր մահուան՝ փոխուին նախկին կարգեր. եկեղեցւոյ նուիրատուաց մէջ սովորութիւն մտնէ փոխանակ տուեալ պարզեաց պահանջել զանազան թուով պատարագներ. — զայս տես յատկապէս ի խնդիր Գ, յօդ. Գ. — որով թէ վանական եւ թէ ժողովրդական եկեղեցիք հարկադրին բազմացնել պատարագները եօթնեկի մէջ. այնպէս որ թ դարու երկրորդ կիսուն արդէն հսկայագորեայ եղած գտնեմք. տես Գր. Սուփանայ արձանագիրն ի նոյն Գ խնդ. եւ յօդ: Յաջորդ դարուն խոսքով եպօ. անձեւացեաց յայտնապէս զրէ ի Մեկն. պատրդ. «Ֆրիստոսի հսկայագորդ պատարագելն... յամենայն եկեղեցիս... Զնոյն եւ սուրբ պատարագան օր ըստ օրէ շնորհեցէ» (12): — Եւ իւր որդին ս. Գր. նարեկացի ի Բանն խրատու. ֆրիստոս «Յամենայն օր պատարագի... Եւ եթէ գնամք յամենայն օր ի ժամ սոսկալի խորհրդոյն կատարման» (մտնոր. 526). եւ աղօթից մէջ՝ «յօր ըստ օրէ կատարիլն» (ԾԳ,

Գ) : Խոսորով աշխարհիկ եկեղեցեաց սովորութիւնը ներկայացնէ , որդին վանականացը . եւ ահա երկուքն այլ հաւասար են : — Շուշանայ սիւնեաց տիկնոջ արձանագրին մէջ ի ս. Աստուածածին Խոտակերաց վանայ , յամին ՅԾԹ=910 , կարգամբ . « Ի տարին երեք քառասունք կատարեն մեղուցեալ հոգւոց մերոց » (Ստ. Որբել. 107) : Երեք քառասունքն հարիւր քսան օր է . եւ տարւոյն շաբաթք , կիրակէք եւ տէրունականք հազիւ բաւէին միայն այդ տիկնոջ պատարագաց . իսկ ա՛յլ նուիրատուաց : Հետեւաբար երեք քառասունքը պարտէին ամէն օր անընդհատ կատարել : — Մրենոյ եկեղեցւոյն (աշխարհիկ) արձանագրին մէջ՝ ի ՆԽԱ=992 . « Պարտիս իմ ընդեցեալ . . . զբարեկենդանին ոչրբար արն պատարագն . . . յիմ անուն մատուցանե » (հ. Ներս<sup>\*</sup>. 196) : — Արձնգր. Շահանդխտոյ թագուհոյ սիւնեաց՝ ի Տաթեւ , ի ՆԽԷ=998 . « Զվարդալառին քառասունքն պատարագ առնել » (Որբել. ԾԿ) . այդ քառասունքը թէ շատ՝ եօթն եօթնեկաց միջոց ունի մինչեւ ցլխերափոխումն . հետեւաբար հարկ էր անընդհատ ամէն օր պատարագել :

\* Տեղւոր . ի փոքր եւ ի մեծ հայս՝ հ. Ներսիսի Սարգսեանի :

ԺԱ. զարուն նոյն սովորութիւնն յառաջ երթայ : կատարանիդ թագհ . արձնգր . մէջ ի կաթողիկէն Անոյ , յամին ՆԾ=1001 , սահմանի՝ « Զվարդաւարին յիսնեակսն միով քառասնիւ կատարել » (հ. Ներս . 117) . անընդհատ ինչպէս նախորդը : — Արձնգր . պահլաւունի վահրամ պատրկի՝ Մարմաշենի վանոց մէջ , ի ՆՀԸ=1029 . « Տարին 9 քառասունք » (Շիրակ<sup>\*</sup> , 148) , որ է երկու հարիւր քառասուն պատարագ . զորս եթէ միայն երկու օր մատուցանէին եօթնեկի մէջ , երկու տարւոյ մէջ հազիւ աւարտէր : — Արձնգր . ի ս. Գրիգոր Ապուղղամբեանց յԱնի , ի ՆԶԹ=1040 . « Զամեն ոչրբար իմ քեռն Սեղաի եւ զշաբաթն իմ եղբարն » (հ. Ներս . 135) : — Այս զարուս բաց ի պարտաւորիչ պատարագաց՝ եօթնեկի մէջ ստէպ պատարագելը սովորական ըրաւ նա եւ տօնելի սրբոց բազմանալն ի ձեռն Գր. վիպասիրի , որ ճախցոյց զճաշոցն « ըստ ամենայն տաւնից ի դէպ սաղմոսիւք եւ ընթերցուածովք աստուածախաւսիւք » \*\* :

\* Շիրակ , ինչպէս յետոյ Սիսական եւ Այրարատ , են տեղագր . հ. Ղեւ . վ. Արիշանի :

\*\* Տես յէջ 195\*\* յուցուած յիշատակաբանի մէջ :

ԺԲ դարուն նոյնպէս : Ս. Ներս. լամբրոնացին ի Մեկն. պարզ.\* զրէ. « Քրիստոսի՝ ամենայն աշուր վասն մեր պատարագելոյն յամենայն տեղիս » (179 եւ այնն) : Եւ ի թղթին առ Լեւոն թագ.\*\* զրէ. « Ունելով զՔրիստոս վասն իմ օր ըստ օրե առաջի Աստուծոյ հօր պատարագ » (217) :

ԺԳ դարուն զարձեալ նոյնպէս : Սմբատ իշխան ի ս. Նախավկայն Նորավանից յամին 2Ժ = 1261 արձանագրէ. « Միաբանքս հաստատեցին զաւագ խորանն որ հանապագ պատարագ պարոնացն առնեն. զշարքս եւ զկիրակի Լիպ. հիւնգաբար Ասի. զերկոռչարար ու զերեքշարքս Ելիկ. չորեքշարքս իւրոքարքս Փախր. » (Սիսական, 190) :

Համառօտ ըսեմ, մինչեւ ժե դար դեռ հանապագօրեայ պատարագումն յայտնի է ինձ. Գրիգոր տաթեացի իւր քարոզագրոց\*\*\* մէջ ասէ. « Այսպէս կարգեցին ի կանոնս հարքն սուրբք, զի յաւուրս քառասնորդաց պահոցս պատարագ ոչ մատուցանեն, բայ ի շաբաթէ եւ կիրակէէ » (հա. Ա, ՀԸ). ուրեմն արաբքոյ

\* Տպ. ի Վենետիա :

\*\* Տպ. ընդ Գր. Տղայի ի Վենետիա :

\*\*\* Կ. պոլսոյ 1740-1ի տպագիրը գործածեմ, չունելով զըջագիր՝ որ լաւագոյն լինէր :

պահոց՝ այդ երկու օրերէն դուրս այլ պատարագէին, ինչպէս յիշէ եւ այլուր « մի անգամ պատարագիլն յաշուր » (Բ, ԼԸ), որ է ամէն օր ըստ առաջին սովորութեան :

Աստի յառաջ երթամ՝ առանց հանդիպելու այլ տեղեկութեան՝ ցծէ դար : Հոս Զաքարիա կամ Զաքէոս պատմիչ Յակոբայ Կ կաթողիկոսին համար (մեռեալ յամին 1680) աւանդէ, թէ նորա մահուան օրն « ամենայն երկոռչարարի՝ առնեն պատարագ քահանայքն Ղալաթայու » (Բ, ԽԶ) : Եւ նորա յաջորդին Եղիազարու համար այլ, թէ ի ս. Գայիանէ « Հաստատեաց եւ միաբանս, զի ժամ եւ պատարագ մատչիցի հանապագ » (Բ, ԺԲ). հանապագն ինչպէս ժամերգութեան, նոյնպէս եւ պատարագին համար հանապագօրի նշանակութիւն չունի՞ : Զայս հաստատէ եւ հետեւեալ դէպքը, զոր նոյն պատմիչ (յամին 1687) ի ծայր կոնդակին Յովհաննու՝ վաւից աւանդէ իւր հօրեղբօր՝ Քանաքեռի վանականի համար, թէ նոյն իսկ « Յաւուր մեծի ուրբարիս հրամայեն նմա առնել պատարագ. եւ նա ոչ զիտելով զխորհուրդ աւուրն՝ առնէ պատարագ » հրամանաւ իւր եպիսկոպոսին. որոյ համար պատժուի Առաքել կաթողիկոսէն : Դեռ այդ ժամանակ այդչափ անխտրութիւն էր աւուրց մէջ՝ պատարագելու մասին :

Քաց ի ցարդ յիշուած անհատական վկայութեանց, յայտնի է մեզ՝ թէ ճաշոցը կամ տօնացոյցն եւ պատարագի մատեանը եօթնեկին եւ տարւոյն ամէն աւուրց համար ունին յատուկ ընթերցուածներ, ժամամտեր, մետեղիք, աշէլուք եւ սրբասացութիւնք, որք միւս վկայութեանց հետ միարանին հաստատելու՝ թէ յիշեալ զարուց մէջ բոլոր ազգը սովոր էր ամէն օր պատարագել ։

Թ. Տարւոյն մէջ զարտուղութիւն կազմէին քառասնորդական եւ առաջաւորաց պահք — բաց ի շաբաթէ եւ կիրակիէ \* , — ինչպէս

\* Ը դարուն ոմանք զեղծանելով՝ այդ օրերն այլ չպատարագէին . « Են ոմանք, զբէ Իմաստասէրն, որք ի սուրբ քառասներորդս պահոցն զշաբաթ եւ զկիրակիէ օրն ընդ արտմութեամբ եւ ընդ ապաշխարութեամբ արկանեն որպէս եւ զայլ եւս հինգ աւուրսն զանցեալ . ոչ տան թոյլ զէրկհականն ի նոսա կատարել զպատարագ » (15) : Սուրբ հայրապետը սաստկապէս կռուեցաւ այդպիսի պահօղաց դէմ, պահանջելով պատուել այդ աւուրց մարտիրոսաց եւ յարոշրեան յիշատակները (16), մինչեւ անգամ ազատութիւն այլ տալով յէ ժողովին Գունայ « պահելոյ եւ շոթմաներոյ » այդ օրերն ըստ « աւանդութեան եկեղեցւոյ » (23), զոր գանեմք Ե եւ ՚ զարուց մէջ այլ . (ս. Սահակ . — Գրարշարունի) :

տեսանք առաջնոց համար Տաթեացոյն խօսքը . եւ նոյնն այլուր « հինգ օր առաջաւորն ընդ աղուհացիցն համարեալ » դնէ (Ա, ԻԷ), որպէս եւ Գր. արշարունի Է զարուն (ԼԱ) : Այս պատճառաւ եկեղեցական մատեանքն այլ այդ օրեր պատարագի ընթերցուածներ չունին . եւ Ապուղամբեանց վերոյիշեալ արձանագիրն եւս յամին 1040՝ յաւելու . « Եւ առաջաւորացն ոչբարսիկ եւ աղցացն ոչբարսակոյն փոխան՝ յարձակ աւուրքն արացեն Ը աւր » :

ԹԱ. Կարելի կարծեմ ցուցնել հաւանականաբար՝ թէ երբ եւ ինչպէս սկսաւ փոփոխիլ պատարագի հանապազօրոցութիւնը : Առաքել պատմիչ դարիծեցի աւանդէ, թէ ի Սիւնիս Հարանց անապատի մէջ ԹԷ զարուսկիզբն բաց ի աէրունական տօնից՝ շաբաթ եւ կիրակիէ միայն պատարագէին (ԻԱ, 195 ապ. Վղըշ) : Համեմատելով զայս Գանաքեռի նախայիշեալ սովորութեան հետ, նոյն զարուսկի մին միւսոյն հակառակ գտնեմք : Աստի երկու ինչ հետևի . առաջին՝ թէ այդ ժամանակներէն սկսեր է փոփոխիլ պատարագին հանապազօրեայ մատուցումն . եւ երկրորդ՝ թէ այդ չէ եղած եկեղեցական միաձայն կարգադրութեամբ մի, — զի հակառակ պարագայի մէջ սովորութեան միակերպութիւն պիտի լինէր, — այլ թուլութեամբ ։

Այսօր զանազան վիճակաց մէջ դեռ յարատեւ պատարագել յեօթնեկի՝ բաց ի շաբաթէ եւ կիրակէ՛է՛ նա եւ չորեքշաբաթին կամ հինգշաբաթին: Բայց կաթողիկեայ հայք, ինչպէս յայտնի է, դեռ ամէն օր պատարագեն:

### Խնդիր Բ

Արդեօք ամենայն քահանայք պարտաւոր էին յիշեալ աշուրց մէջ պատարագելոշ, թէ միայն մի քահանայ:

Ա. Ամենին պարտաւորիչ կանոնի չեմ հանդիպած նախնեաց մէջ. եւ լինելն այլ հաւանական չէ: Այս ստոյգ է՝ թէ հին քրիստոնեայք երբ հաւաքուէին ի պաշտօն, միայն մի պատարագ մատուցանէին ըստ հնախօսից (Փլորի, Բ, ԺԱ). եւ այդ սովորութեան ի մեզ յարատեւած լինելոյն պէսպէս փաստեր կան, զորս յառաջ բերեմ: Բայց այս խնդիրը կարեւոր է բաժանել. հոս պիտի խօսել նախ ազգին ընդհանուր կամ աշխարհիկ վիճակաւորաց սովորութեան վերայ, եւ մասնականիս կամ վանականին վերայ՝ յետոյ:

Բ. Առդ, բոլոր քահանայից ամէն օր

պատարագելու հարցը սերտ կապ ունի եկեղեցւոյ կազմութեան հանգամանաց հետ: Հայկական հնագոյն սովորութեամբ՝ իւրաքանչիւր եկեղեցի միայն մի խորան ունէր. սուրբ հարբ իւրեանց գրուածոց մէջ խօսին միշտ մի սեղանոյ վերայ. «Չսաճարս աղօթիցն՝ յորս սուրբ եւ աստուածընկալ սեղանն է հաստատեալ, յորոյ վերայ կատարի...» (ս. ՄՏկ. Սոփ. Բ, 84). «Հանապազ հացանայ յեկեղեցիս ի վերայ սուրբ սեղանոյն» (Եղիշ. մանգր. 225). «Չսեղանն՝ յորոյ վերայ պատարագն Քրիստոսի մատչի» (ՅՏ. իմ. 26). եւ այլն: Եւ Լամբրոնացին ի Մեկն. պտրգ. բողոքելով սեղանոց բազմութեան դէմ, գրէ՝ թէ «Մի սեղանոյն բաւականացաւ Անուոյ կաթողիկէն» (108), զայդ համարելով հին եւ հարազատ: Այսպէս ունի նա եւ Տեկորոյ եկեղեցին՝ Ե դարուն կառուցուած\*, եւ այլ հնագոյնք: Դարձեալ ծանօթ է հնագիտաց, թէ յետ բարձման հալածանաց քրիստոնէից՝ հաստատեցաւ հսկողիսիչ կամ ձայնաւորութեամբ մատուցանել պատարագը. եւ մեր նախնեաց քով այլ նոյնպէս յիշուած զտնեմք՝ ուր որ առիթ լինի, ինչպէս պիտի տեսնեմք

\* Հ. Ներս. 205. — Շիրակ, 131:

Գ խնդրոյն մէջ ի յօդ. Ա-Բ : Դարձեալ պատարագի համար սահմանուած էր ցերեկի յետին ժամերէն մին , իննբորոյը կամ երրորդն ըստ արեւմտեայց\* : Արդ՝ մի սեղանով , հանդիսաւորութեամբ եւ իննբորոյ ժամուն բնականապէս չէր կարելի մատուցանել օրն աւելի քան մի պատարագ :

Չ դարուն , ուր տեսանք թէ եօթնեկի մէջ հազիւ երկու օր պատարագէին , Դունայ ժո-

\* Հրէից պարասկեւին կամ տօնամուտն այլ այլ ժամուն սկսէր . Յիսուս նոյն ժամուն մեռաւ . նոյն պահուն պատարագէին կամ հազորդէին եւ հին քրիստոնեայք (Վկլլըն . Ա . 244 . - Վարք հրց . Ա . 183) : Ուխտանէս ժ դարուն յիշէ սովորական կիւրակէ մի Ախուրենի եզրը մատուցուած մի պատարագ նոյն ժամուն (Ա . Ա) : Գրչագիր ժամադրոց մէջ այլ խորհրդատեարը զեանդուած է յետ իննբորոյ ժամու ազօթից : Այսոր հետեւութեամբ Հարանց անպատի մէջ եւս այնոր հիմնարկութենէն (յամին 1610) սկսան նոյն ժամուն պատարագել ըստ Առաքել պատմչի (ԻԱ . 196) : — Այս ընդհանուր կարգէն դուրս թողլի է հարկեցուցել զպուսանները . զոր օրինակ՝ Վարդանանք Աւարայրի մէջ հաւախօսին պատարագեցին եւ հազորդեցան , զի առաւօտուն պիտի պատերազմէին (եղիշ . Փրպ .) :

գովը գրէ՝ « ի պատարագի կիւրակից եւ տօնից » , եւ ոչ ի պատարագաց . « զշարթու պատարագ » , եւ ոչ պատարագս :

ԺԲ դարուն , յորում ամէն օր պատարագելու սովորութիւնը տեսանք , Շնորհալին ընդհանրական թղթոյն\* մէջ խօսելով առ քահանայս՝ գրէ . « Չմիտս եւ զգայարանս պարտական էք պարսպել... առաւել յայնմ առաջը՝ յորում յԱստուած մերձեանալ հանդերձեալ իցէք » (147) : Ուրեմն ամէն քահանայ ամէն օր չպատարագէր : Եւ Լամբրոնացին միշտ « պաշտօնէից սպասաւորութեամբ » կամ « պաշտօնէիցն դասուք » պատարագէր ի Տարսոն (առ Լեւ . 218) . ուստի եւ մի պատարագ մատուցանելով յաւուրն . թէ ինչպէս , փոքր ինչ յետոյ :

ԺԵ դարուն սկիզբը Գր . տաթեացի քարոզապրոց մէջ համեմատէ հին օրինաց քահանայապետին « մի անգամ մուտն ի տարին՝ (եւ) մի անգամ պատարագիլն յառաջ » (Բ , ԼԸ) . տես եւ ի խնդիր Գ , յօդ . Է : Նա եւ ԺԵ դարուն Հարանց անապատի մէջ լոկ մի հանդիսաւոր պատարագ մատչէր խորհրդոյն սահմանեալ օրերը՝ շաբաթ եւ կիւ-

\* Նամականի իւր , տպ . ի Վենետիա :

բակէ՛ ըստ Առաքելոյ (ԻԱ, 196): վանականացս այս սովորութիւնն, հակառակ նոցա նախկին ընթացից՝ զոր պիտի տեսնել յաջորդ խնդրոյն մէջ, առուած էր աշխարհիկ եկեղեցականութենէ:

Այս ոճով ուրեմն այնպէս պատահէր՝ որ երբ դեռ ամէն օր պատարագելու սովորութիւն չկար, կամ երբ եղաւ եւ բարձաւ, իւրաքանչիւր քահանայ մի կամ աւելի եօթնեկաց մէջ — ըստ թուոյ պաշտօնէից իւրաքանչիւր եկեղեցւոյ՝ — հազիւ մի անգամ պատարագէր: Եւ աւելի ստէպ՝ երբ պատարագն հանապազօրեայ էր:

Ք. Աւելի հետաքրքրիչ տեղեկութիւն մի կայ նախնեաց քով: Հին դարուց մէջ սովոր էին քահանայք եւ եպիսկոպոսունք ի միասին պատարագել\*, որ եւ յունաց մէջ կայ ցայսօր: Նոյն սովորութեան յիշատակն յԹԲԹԳ դարս մեր մէջ այլ գտնեմք. Լամբրոնացիին ի Մեկն. պտրգ. զքահանայս դնէ իւրեանց

\* Առաքելոց կանոնք. Ա, ԻԸ, Բ, Ը ըստ հայ. — Ս. Աթան. Զատագ. Բ: — Նիկիոյ անվաւեր Բ կանոնաց մէջ այլ կայ այդ. «Ոչ է պարտ երեցանց առանց եպիսկոպոսին ի սեղանն ելանել՝ նախ քան զեպիսկոպոսին ելանել եւ նպտել» (կան. ձԺ):

վիճակին յատուկ զգեստուց մէջ եպիսկոպոսին հետ. այսպէս ի խնկարկութեան (309—11). յետոյ մինչ սա «խոնարհի եւ աղօթէ ի ծածուկ, և ոյնպիս եւ քահանայք ընդ ևնա զաղօթս զայս. Տէր Աստուած մեր, որ կարգեցեր» (202). նոյնպէս եւ յետ վերաբերութեան «զձեռն իւր լուանայ քահանայապետն հասնդեղձ պարկեշտ կարգօքն քահանայից» (338). դարձեալ՝ «աղօթիւքն զոր մատուցին (եպ. եւ քնյք.) առ Քրիստոս» (339): Եւ նոր ձեռնադրելոց համար գրէ. «թէ եպիսկոպոս է, ընդ այլսն պատարագէ\*» (214): — Յետ ԹԳ դարու Յ՛. արձիշեցւոյ Պտրգ. մեկնութենէն եւ Ստ. սիւնեաց եպիսկոպոսի եւ պատմչի առ Գր. կթղ. անաւարզացի գրած թղթէն (յիւր պամ. ԿԹ)

\* Լմբ. յաւելու. «Ապա թէ քահանայ, ի հիւսիսոյ կուսէ կանգնի, ունելով զդէմս ի սեղանն, եւ դնէ զերկու ձեռուն ի սեղան ի վերայ միմեանց, եւ եպիսկոպոսն առնու զմաղղմայն հացովն, եւ դնէ ի վերայ ձեռին նորա եւ անդր օրհնէ, եւ անդ մնայ անշարժ, կրկնելով զնոյն մինչեւ ի կատարումն իորհրդոյն եւ հաղորդելոյն»: Այս միայն ձեռնադրութեան պատարագի մէջ. իսկ այլոց մէջ բնականապէս դարձեալ ի միասին պատարագէր եւ նա:

խմանամբ նոյն սովորութեան տակաւին շա-  
րունակութիւնը\* :

Ք. Զայդ սակայն նորամուտ կարծեմ, ըստ  
որում Միւնեցին բողոքէ այնոր դէմ իբր հա-  
կառակ ազգային աւանդից. « Ի ժամ սրբոյ  
խորհրդոյն կատարման՝ ոչ ամբօխիւ իբր ի  
մարմնատր խորհուրդ քուսել, եւ զմի նշխարն  
յուծ եւ ի տասն պատարագ բաժանել » :  
Ըստ նոյն պատմչին՝ այդպէս պատարագողք  
յենուին ս. Գիորնիսեայ մի թղթին վերայ, զոր  
եւ լամբ. յիշէ ի Մեկ. պտրդ. (189) : Միւնեցին  
իւր զաւառի կամ վերին հայտց սովորութիւնը  
թուի ցուցնել յաջորդօվն. « Սյլ անիւ եւ դո-  
ղութեամբ առանձինն ընդ Աստուծոյ միանալ-  
եւ թէ պատռակիցք իցեն, մերձ կացցեն (սե-  
ղանի քով) եւ ի նմանէ հաղորդեսցին որպէս

\* Զաքարիա պատմիչ աւանդէ Լիմ անա-  
պատին մի Յովհաննէս անուն աբեղայի (յետոյ  
եպս.) համար՝ Փիլիպպոսի կիթչ. օրով (Յի. դար),  
թէ համբարձման օր մի վանականքն « Հրա-  
մայեցին պատարագել զՔրիստոս, եւ հաղոր-  
դեցան ի նմանէ ամենեքեան » (Ա, 104) : Նոյն-  
պէս երբ նոր վանահայր ընտրուէր, « պատա-  
րագ հայրն մատուցանէ եւ ուխտն հաղորդին »  
ըստ հին մաշտոցի (նախ քան ժՍ. դար) մեր  
զըչազրատան :

պարգեւ » : — Հաւանական է՝ որ այդպէս  
պատարագելը Լամբրոնացին սկսաւ. ըստ ո-  
րում տեղ մի վկայէ ինքն իսկ՝ թէ բազմու-  
թեամբ ի միասին պատարագելն հոռուսոց սո-  
վորութիւնն է (189). եւ թէ ինք « գեղեց-  
կացուցեալ » է խորհրդամատոյցը (192), եւ  
նոյն սովորոյթը նախ իւր խորհրդատարին  
մէջ գտնեմք : Անշուշտ զայդ համարեց յար-  
մար ուղին՝ խափանելու սովորութիւնը մի ա-  
ւուր մէջ շատ պատարագներ ի թիւ մա-  
տուցանելու, որում հակառակ էր նա. (այս  
մասին յաջորդ խնդրոյն մէջ) : Նոյնն ընդու-  
նելի եղաւ նա եւ այլոց, ինչպէս յայտնի  
է այնոր յետ իւր մահուան զեռ շարունա-  
կութենէն : Սակայն լաւագոյն էր ըսել՝ թէ  
Լամբրոնացին նորոգեց զայն. զի միթէ  
չէ՞ կարելի այդպիսի համարել ս. վրթա-  
նիսի հանդերձ « սակաւուք » մատուցած պա-  
տարագն եւս Գ. դարուն : Ս. Սահակայ  
տեսլեան մէջ այլ կարգամբ. « Էի ես ի մեծ  
հինգշաբաթուոյն . . . հաղորդեալ (Միւնեցոյն  
ըսածին պէս, եւ ոչ առանձին պատարագեալ)  
ի ժամ երեկոյի պաշտաման սրբոյ եւ մեղ-  
սաքաւիչ խորհրդոյ կենարարին\* » (Սոփ. Բ,

\* Այդ դէպքն հանդիպած աւանդուի « Յառաջ

45) : Անհաւանական չէ այսպիսի սովորութեան մի գոյութիւնը մեր Դ-ն դարուց մէջ եւ յետոյ խափանուիլը . զի յունաց , լատինաց եւ այլոց ունեցած հանրական սովորութեան մի մեր եկեղեցւոյն մէջ չլինելն անբնական բան է : Եւ մի հին պատարագ (անձըզգութեամբ ընծայուած ս. Սահակայ) , զոր մեր նախնիք երբեմն գործածէր են անշուշտ , աւանդէ ի ճաշակման՝ [Թէ «քահանայն բաշխէ որոց ընդ նմա» (Գթրճ. պտրգմ. 238) : — Միանգամայն փափաքելի էր այնոր ցարդ յարասեւելը կամ նորոգուիլը . «Քանզի (ըստ գեղեցիկ բանից Լմբ.) եւ զայս վայելուչ կարծեմ եւ ընդ անստերիւր պողոտայն շաւիղ . զի խորհուրդ հազորդութեան անուանի , եւ պարտին հազորդքն միաբան աղօթել , եւ հաւատարապէս առ միմեանս ի նոյն վայելել» (189) , որ արդարեւ վսեմ այլ է :

Յ. Մինչեւ ցարդ խօսեցայ յատկապէս աշխարհիկ վիճակաւորաց օրը մի պատարագ մատուցանելոյն վերայ : Այսոր հակառակ էր վանականացն ընդհանրապէս . սոքա սովոր էին՝ «քան զամն բազումն» , ուրեմն նախ քան իւր հայրապետութիւնը , որով անտեղութիւն չմտայ պատարագակցոյնքս «հաղորդեալ» լինելոյն մէջ :

սկսեալ որոշ ժամանակէ մի՝ իւրաքանչիւրն ամէն օր պատարագել : Եւ որովհետեւ չէր կարելի մի աւուր մէջ այնչափ ձայնաւոր պատարագ ընել , այլ հարկ էր թիւ մատուցանել , ուստի անցնիմ ցուցնել միանգամայն այս վերջնոյս գոյութիւնն այլ :

### Խնդիր Գ

Թիւ պատարագ մատուցակելու սովորութիւնն , որ այժմ կայ կարողիկեայ հայոց մէջ , նր դարեւ մոռոնուած է :

Ա. Քրիստոնէութեան հալածանաց առաջին շոր դարուց մէջ ամէնը սովոր էին իւրեանց ծածուկ ապաստանարանաց մէջ՝ թէ արտաքոյ եւ թէ մանաւանդ ի քաղաքս՝ զաղանի , լուիկ կամ թիւ պատարագել , ինչպէս յայտնի է : Դեռ Գ դարուն Գր. նազիանզացոյ հայրն առանձին իւր սենեկին մէջ մատուցանէր ըստ պատուելոյ նոյն վարդապետին (ի ճառն ԺԹ) : Բայց բարձմամբ հալածանաց դադարեցաւ թիւն , ինչպէս ըսի յառաջ . յետ յաղթանակելոյ խաչին պատշաճ էր՝ որ հալածեալ քրիստոնէութեան գերագոյն պաշտօնը կատարուէր ոչ եւս անուրք ինչպէս յառաջ , այլ ամենայն

պայծառութեամբ: Ոսկերեբան ի մեկն. Եփեսո. (Գ) խօսելով սուլորական կամ «հանապազօրոյ» պատարագի վերայ, միշտ ընթերակայ զնէ բազմութիւն հաւատացեոյց, քարոզի կամ սարկաւագի ազդարարութիւնը, եւ ըստ այսից եւ մեղաւորաց արտաբնութեան եւ այլ բազում արարողութիւնը, որք միշտ հանդիսաւոր ցուցնեն պատարագը: Եւ ի մեկն. Ա Տիմ. թէ զատկի պատարագին մէջ քան զսուլորականն «ոչ ինչ աւելի տեսանէք, բայց միայն զարտաքին զարգն եւ զբազում ժողովրդոց պայծառութիւն» (Ե, 47):

Բ. Մեր ազգն այլ նախ քան զԼուսաւորիչն անտարակայս ստիպեալ էր այլոց պէս թիւ մատուցանել. իսկ յետոյ բնական է կարծել թէ հանդիսի՝ նման յունաց: Գ զարն ակներեւ փաստիւք հաստատէ թիւ պատարագին ի մեզ գոյութիւնը: Ծոփաց Մամբրէ վնաց մէջ կատարուած պատարագը, զոր յիշատակէ Փաւստոս (Ե, ԻԸ), հ. Գաթրճեան թիւ համարի ի Սրբոյ. պորգմ. (100): Բայց ոչ նուազ իրաւացի է հակառակն այլ կարծել հետեւեալ խօսքերէն. «կառարեիև զխորհուրդ... պատարագին. հանկն զհացն եւ զգինին»: Նոյնպէս եւ ս. Վրթանէս ընկերներ շրջեցնէր իւր հետ՝ կատարելու ս. խորհուրդը:

«Երթեալ շրջէր առանձինն սակաւութեամբ՝ կատարել զպատարագն» ըսաւ Փաւստոս\* : Պատշաճն այլ այն էր՝ որ հայրապետ մի իւր այցելութեանց ժամանակ ըստ կարեւորոյն հանդիսի պատարագը ի տես ժողովրդեան:

Մամբրէի պատարագը թէ թիւ իսկ լինէր, զարմանալի չէր Գ զարուն համար, յորում

\* «Սակաւութեամբ» բառը չպիտի շփոթել զմեզ զինասնեաց ձայնաւորը մերոյս չնմանէր. նոքա զրեթէ ամէն ինչ թիւ պաշտէին՝ բաց յերգոց կամ օրհնութեանց եւ սաղմոսաց, որով զիւրին լինէր իւրեանց պատարագն: Առ այս գտած եմ ոչ սակաւ յիշատակարաններ, որովք չուզեմ ծանրաբեռնել հատուածս. դեռ 1767ին Յհ. Թասպասեան աւանդէ, թէ «պատմականք՝ որպէս ժամանակագրի, կամ վարդապետականք՝ զոր օրինակ ընթերցողս, կամ շաւանութեան՝ որպէս հաւատարմի, եւ կամ յորդորականք՝ որպէս քարոզչի, այսպիսիք ծանր եւ իմանալի ձայնիւ ասին առաւել եղանակի». — թէ եւ ժամամուտքն եւ հանգանակն թիւ դարէն երգէին եւս: — Մեք նախնեաց թիւ մատուցող եղանակաւոր եւ մինչեւ անգամ ստեղծեմք ըրեր. նոյն իսկ քարոզներն այլ, որ ազդարարութիւն են ժողովրդեան. նախնիք պիտի չծիծաղէին, եթէ տեսնէին մեր եղանակաւ կամ ստեղծեալ զարարելը:

դեռ նոր սկսէր դադարել թիւ մատուցումն : Բայց թէ Ե դարու մէջ կամ սկիզբն այլ դեռ կար՝ այդ շատ հեռի է հաւանականութենէ . զի դժուարին է՝ թէ քան զՈսկերեբանի նկարագրածը տարբեր ընթացք ունեցած լինին մեր նախնիք : Այլ եւ թէ յայնժամ լինէր թիւը , գոնէ մինչեւ ի Զ դար պէտք չէր տեսել : Եւ ահա Զին առաջին կիսուն Գունայ Բ ժողովի Զ կանոնը , թէ «Քահանայք զշաբաթու պատարագ եւ զկիրակէի... մատուցեն անսխալ՝ սաղմոսիւք եւ մարգարէիւք եւ առաքելու եւ աւետարանու կարգաւորաբար» , ցուցնէ սովորական պատարագաց միշտ հանդիսաւորութիւնը : Եւ քանի որ եօթնեկի մէջ լոկ երկու օր պատարագէին , եւ օրը մի անգամ , կարիք եւ պատշաճութիւն այլ չկար անշուք թիւ պատարագին :

Փ . Այդ ի մեզ որոշակի սկսի երեսել այն դարուց մէջ , երբ եօթնեկի երկօրեայ պատարագն հանապազօրեայ դառնայ . եւ այն վախճանաւ՝ որպէս զի մի աւուր մէջ ամէն քահանայք մատուցանելով , վանաց եւ եկեղեցիաց յանձնուած պատարագաց գումարը կարողանան լրացնել : Իմ այս տուած պատճառս ուղիղ կարծեմ . որովհետեւ հետեւելով արձանագրաց՝ տեսնեմ որ թիւը պատարա-

պաց բազմութեան մէջ երեւի , այնոր հետեւանքն է : Նախ քան թ դար եղած արձանագրաց մէջ — եւ ոչ իսկ յայլ զիրս — սովորութիւն չգտնեմ մի կամ աւելի պատարագներ սեպհականելու անձանց . հիմնադիրք Տեկորոյ եկեղեցւոյն ի Ե դարու՝ արձանագրեն միայն , «հիմնարկեցաւ... յիւր բարեխաւսութիւն» . Ալամանայ եկեղեցւոյն յամին 636 , թէ «շինեցաք... վասն մեր հոգաց» (հ . Ներս . 194) . հին թիւընոյ ս . Աստուածածնին ի վերջ նոյն դարու , թէ «շինեցի... ի բարեխաւսութիւն ինձ» (Այրարատ , 138) . եւ այլն : Այդ ժամանակաց բոլոր բարեգործաց յիշատակին բաւական էին եօթնեկի երկու հանդիսաւոր պատարագները կամ աղօթք : Իսկ շատ եւ թիւ պատարագաց պէտքն եւ սովորութիւն յետոյ յերեւան ելնէ , զոր հոս տեսնեմք յաջորդաբար :

Թ դարու երկրորդ կիսուն Գրիգոր Սուփան շինէ ի Կոթ եկեղեցի մի Աստուածածնի , ուր արձանագրէ . «Կարգեցի քահանայս... եւ ետու միոյ միոյ քահանայի Ծ զրամ ի տարւոյն... Էւ յամենայն ամի իւրաքանչիւր յիւր յիւր քահանայիցս չորիցս քատարան առնիցեն վասն իմ» (Որբել . 15) : Այդ քահանայք սո նուազն համարելով երեք հո-

զի\* , տարւոյն մէջ եթէ ամէն օր մի պատարագ մատուցանէին , մի տարւոյ համար սահմանեալ թիւը միայն երկու տարւոյ մէջ կարող էին լրացնել . եւ զեռ աւելի ուշ , եթէ քահանայք քան մեր զրօժը շատ էին : Ուրեմն հարկ էր որ օրը մի պատարագէն աւելի նուիրէին , այն է՝ իւրաքանչիւր քահանայ զատ զատ . եւ հետեւաբար թիւ պատարագ , զի չէր հնար օրը երեք կամ եւս աւելի ձայնաւոր մատուցանել մի եկեղեցոյ մէջ : — Տաթեւոյ նախկին կաթողիկէն՝ հիմնեալ յամին ՅԽԳ=895՝ ունէր « շորս խորանս բաց յառագ խորանէն » (Որբել . ԽԱ) : Սեղանոց բազմութիւնը մի եկեղեցոյ մէջ՝ որ եւ իցէ ժամանակ նպատակ ունի շատ պատարագներ ի միասին՝ ուստի եւ թիւ՝ մատուցանել : — Եւ որովհետեւ Թ գաբուն այգպէս սովորական էր աներգ պատարագն , ուստի բնական է կարծել՝ որ աւելի կանուխ սկսած լինի՝ գէթ վաներու մէջ . բայց յետ Իմաստասիրին :

Ժ. գարուն Գր. նարեկացի վանականաց

\* Թէ եւ բացատրութիւնն աւելի ցուցնէ , մասնաւոր նոցա բնակութեան համար շինած « ութ » սենեակք :

տուած Կարգ եւ կանոն աղօթից\* կոչուած խրատին մէջ գրէ . « Մի շատ (պատարագեր) , զի մի արուեստ լինիցի . յամենայն շաբաթ մի օր բաւական է » (418) : Այլ խրատն ի դէմն մի հոգւոյ՝ տայ ամէն վանականի . եւ երբ ամէն վանականը եօթնեկի մէջ « շատ » պատարագէին , յայտնի է թէ թիւ մատուցանէին : Կարծես թէ զայս ակնարկէ նոյն հայրն եւ իւր աղօթից մէջ . « Յարակայ զեւնեալ ի սպանդարանի անթիւ սեղանոց անըստ պտուղեամբ » (ԽԷ , Գ) : — Եւ Փիլիպպէ իշխան ի ս . Գրիգոր Տաթեւոյ յամին ՅԳԲ=943 սահմանէ . « Ի վարդալատի աւուրսն մի քառասունք առնեն անխափան » (Որբել . ԾԱ) . երեք օրը քառասուն պատարագ :

ԺԱ. գարուն ունիմք վարդիկ վանահօր արձանագիրն ի ս . Յովհաննէս Յախաքբարի , յամին ԾԺ=1061 , յորում պատուիրէ « զվարդալատին շաբաթն ԺԵ ժամ » (Սիսակ . 155) . մի օրն հնգետասան պատարագ : — վահրամ պատրիկի վեց քառասունքն (ի խնդ . Ա , յօդ . Թ) , որ տարւոյն երկու երրորդ մասն է , չէր հնար կատարել օրը մի պատարագով .

\* Տպ . իւր հօր Խոսրովու Ժմգր . մեկնութեան հետ՝ անթուական եւ անտեղի : Այդ դուրկ չէ վաւերականութեան նշաններէ :

Թէ ոչ՝ այլոց բաւական պատարագ չմնար :  
Նոյնը հասկանալի է եւ ուրիշ բազմաթիւ  
քառասնից համար :

Ճի վարուն Լամբրոնացին ի Մեկն. պտրգ-  
շատ բան աւանդէ մեզ. գրէ նա՝ Թէ « ի  
վաներս քան զթիւ բնակողացն զսեղանն  
բազմացուցաք » (108) : Եւ իւր ժամանակի  
թիւ պատարագին մանրամասն նկարագիրը  
տայ այսպէս. ֆրիստոս « շունի ի մէնջ ոչ  
սարկաւագ պաշտօնեայ , ոչ կէս սարկաւագ  
դոնապան , ոչ զպիր երգեցող , ոչ ընթերցող  
վերծանող , ոչ ջահս լապտերաց , ոչ բուր-  
մունս խնկոց , ոչ ժողովուրդ սիրալիր : Այլ  
զի՞նչ . գտունս \* ի բազում անկիւնս \*\* բաժա-  
նեցաք , եւ զմի հացն ի բազում սեղանս  
պառակտեցաք » (438) :

Պ. Ինչպէս տեսնեմք , Լամբրոնացին հա-

\* Հասկացիր եկեղեցի , ինչպէս նոյն իջի մէջ  
կոչէ եւ « տռնն սրբութեան » . զոր ոմանք ան-  
հըշտութեամբ իմանան « ի միակեցական սե-  
նեակս իւրեանց » առ Լեւոն թղթէն , յորում  
այդպիսի ակնարկութեան չեմ հանդիպած :

\*\* Այդ բացատրութեան մէջ , ինչպէս եւ  
այլուր ըսածին՝ « ծակոտեալ եկեղեցի » (71)  
կամ « որջք ծակուց » (108) , իմանամք սեղա-  
նոց դիրքը՝ որմոց մէջ մտած առանձին կոնքով :

կառակ է այդ սովորութեան . « Միոյ ֆրիս-  
տոսի մի սեղան բաւական է , առէ , եւ բազ-  
մապատիկ պաշտօնեայք՝ նմին սակաւք »  
(108) : Եւ այդ ընդդիմութիւնն արդիւնք էր  
ժամանակին զեղծմանց ի թիւ պատարագի ,  
որպիսիք են . նուիրատուաց ճշգրելով եւ որո-  
շեալ թուով պատարագներ պահանջելն , որով  
չնորհաց խորհուրդն առեւտրի երեւոյթ մի  
առնոյր \* . դարձեալ շատեր տարապայման

\* Այդոր մասին Տարսնի վարդապետին հա-  
մոզումները տարբեր էին քան իւր ժամանա-  
կակցացն եւ մերը : Նա հակառակ էր « զֆրիս-  
տոս պատարագելոյ վասն միոյ հոգւոյ » (77),  
կամ « համարս պատարագաց պահանջելոյ »  
(71) . կարող ես , առէր , զանազան հանգուցեալ-  
ներ միանգամայն յիշել մի պատարագի մէջ  
(78) : Եւ պատարագի տրոց վերայ այսպէս  
խորհէր . « Սմա թէ լինիս ընծայաբեր վասն  
մեղաց քոց քաւութեան » կամ այլ վախճա-  
նաւ , « Աստուած առեալ զպտուղ հաւատոց  
քոց ի ձեռն տրից , . . . հատուցանէ քեզ սու-  
վաւ : Եթէ չունիս իրք եւ չտաս , այլ միայն  
հաւատաս եւ աղօթես , եւս առաւել առնուս  
ողորմութիւն . զի թէ այս ոչ էր այսպէս , ապա  
հասարակաց շնորհս ի մեծատունս վակեցաւ . . .  
Վաճառի նա արգարեւ՝ ոչ արծաթոյ , այլ  
հաւատոց եւ սիրոյ » (432) : Այս այսպէս հա-

վատահուժեամբ մի այդ պատարագաց վերայ՝  
 իւրեանց վարուց անփոյթ լինէին\*։ Եւ ոմանք  
 պատանեաց քահանայական ձեռնադրութիւն  
 տային՝ շատ պատարագներ ունեւո համար\*\*։  
 Այսպիսեաց դէմ սաստկապէս կռուեցաւ նա  
 (63-79, 106-8)։

Ուրիշ պատճառ մ'այլ՝ թիւ պատարագի  
 կատարման անպատշաճ եղանակն էր, որով,  
 զրէ նոյն ս. հայրն ի թղթին առ Լեւոն,  
 վանականք Չորոյդեսոյ պատարագէին ա-  
 ոանց քահանայական զգեստուց, այլ սեռ

ւատաւով, չէր կարող հաշտուիլ « հասարա-  
 կաց շնորհն » այս կամ այն անհատին սեպ-  
 հականեղու սովորութեան հետ։ Ընծայաբերք  
 թող յիշուին, ասէր (426), « եւ ոչ եթէ զհա-  
 սարակաց վրկանսն միայն յինքեանս զբաւել »  
 (168)։ Ի մի բան՝ « Զրին բաշխեսցի ձրի, եւ  
 առցէ զհատուցումն իւր ձրի » (180)։

\* Գողցես այդ է պատճառ, որ այն դարուց  
 մարդիկ արձանադրութեանց մէջ սովոր են՝ սոս-  
 կալի անիծիւք հանդերձ՝ իւրեանց « մեղաց պար-  
 տապան » ընել զայնպիսիս՝ սրբ. ապագայի մէջ  
 յանդգնին խափանել սահմանուած պատարագ-  
 ները եւ կտակներ։

\*\* Դեռ ժե դարուն Զաք. պատմիչ վերոյիշեալ  
 հօրեղբայրն Մարգարէ ձեռնադրեցաւ « աբեղայ  
 երկոտասան ամաց » ըստ նոյն պատմիչ։

փիլոնով եւ վեղարով, դուռն եւ վարազոյրը  
 փակէին ժողովրդեան դէմ. այսպէս եւ « ամե-  
 նայն վանորայրդ ի վերն եւ ի վայր » (218,  
 240-1)։ Եւ ի Մեկն. պորգ. զրէ. « Մտեալ  
 գաղտագողի ի ծերպս խորանաց ծակուց՝ ամ-  
 րափակեմք զզրուսն, եւ անդ շուտափոյթ ե-  
 րադամբ զյաւիտեանն ասեմք եւ զամէնն,  
 հրամայեմք եւ առնեմք, եւ փութապէս ար-  
 տաքս ելանեմք » (440)։ Այդպիսիք նա եւ  
 միայնակ պատարագէին, որ շատ տնպատշաճ  
 բան է տէրունական սեղանոյն, եւ անտեղի.  
 « Տայ իւր միայն զխաղաղութիւնն, եւ ինքն  
 իւր պատասխանէ ասելով՝ եւ հոգւոյդ բում »  
 (442)։

Այդ վանականաց օրինակէն զայլթակղած  
 էին եւ աշխարհիկ քահանայք ոմանք. Ենոր-  
 հալին իւր ընդհանրականի մէջ զրէ նոցա.  
 « Լսեմք զոմանց՝ թէ . . . զսարսափելի խոր-  
 հուրդն անխորհրդական զգեստուք կատարեն,  
 . . . հանելով զծոյզուրդն արտաքոյ եկեղեց-  
 ւոյն եւ զդուռն ընդդէմ ձգելով » (144)։

Ե. Այսպիսի այսպանելի հանգամանքներ  
 պատճառ եղան, որ Լամբրոնացին իւր վիճա-  
 կէն ջնջէ թիւ պատարագը, եւ այլ պաշտօ-  
 նէից միաբանութեամբ օրը մի հանդիսաւոր  
 պատարագ մատուցանէ, ինչպէս տեսանք

ի խնդ. Բ, յօդ. Բ: «Պաշտեցեալն ի սե-  
րովբէից, աւեր նա, պաշտեցի եւ ի հա-  
մակարդութենէ եկեղեցւոյ ըստ իւրաքանչիւր  
աստիճանի, եւ մի ի բաժանմանէ» (180).  
որոյ համար բամբասեցաւ նախայիշեալ վա-  
նականներէն (առ լեւ. 240): Շնորհալին  
այլ հարուածեց անկարգութիւնքը, բայց թիւ  
պատարագելու ընկալեալ սովորութեան դէմ  
չիօսեցաւ. մանաւանդ թէ առ առաջնորդս  
ուխտից գրէ. «Ձուութեալն յեկեղեցիս,  
կամ կենդանեաց միաբանութեան կամ մե-  
ռելոց յիշատակի. . . ի պէտս եկեղեցւոյն  
ծախիցէ, եւ հատուցանէ եկեղեցեան զհո-  
գեւոր զպարտոսն» (107). և այդպիսի հա-  
տուցումն ժամանակին սովորութեամբ՝ ինչ-  
պէս յայտնի է՝ զխաւորապէս լինէր շատ եւ  
թիւ պատարագօք: Իսկ այս մասամբ Տարու-  
նի մեծախոհ եպիսկոպոսին ճգունքը մեծ  
արգիւնք չունեցան. այո՛, պիտի արդիւնա-  
նային, բայց յուշիկ. եւ յաջորդ երեք դարուց  
մէջ զեռ տեսնեմք թիւ պատարագը շարու-  
նակուած: Յիշեմ զոմանս յարձանագրաց:

Ձ. Հոռոմոսի վանացն ի ՈԾ=1201.  
«Յանուն իմ պատարագի ֆս. ժԲ ի տաւնի  
սբ. մարգարէին Երեմիաի» (հ. Ներս. 151):  
— Այլ արձանագիր անդ, ի ՈԿԶ=1217.

«Խնդրեմ պատարագել զֆս. ի տաւնի սբ.  
Գրիգորի ժԵ» (հ. Ներս. 152): — Յով-  
հաննապանիցն՝ ի ՁԻԼ=1279. «Ի տարին  
ժԲ ժամ ի տաւնի Սնդրէի առաք.» (Ջաք.  
պամ. յԱյր. 170): Նորավանից եկեղեցին՝  
հիմնուած յամին 1216՝ ոչք խորան ունէր,  
եւ կառուցողին համար «միաբանքս հաստա-  
տեցին ի սարումն տասն պատարագ ի վար-  
դալառի տաւնին» (Որբել. ԿԵ): Յովհաննա-  
վանիցը՝ շինուած ի 1217՝ ինն խորան ունէր  
(Ջաք. պամ. յԱյր. 167): Թանատի վա-  
նաց արձնգր. ի ՁԿ=1311. «Միաբանքս  
տուին Դ ժամ քառասնից տաւնին» (Սիսակ.  
120). եւ այլն:

Ե. Մինչեւ անգամ աւագ հինդշարաթի  
եւ շաբաթ, ուր ըստ հին եւ արդի սովո-  
րութեան եւ սօնացուցի՝ մի պատարագ կայ\*,

\* Ս. Սահակայ տեսչեան մէջ գրուի. «Էի ես  
ի մեծ հինգշաբաթուոյն. . . հաղորդեալ ի ժամ  
երեկոյիս պաշտաման սրբոյ եւ մեղսաքաւէչ  
խորհրդոյ կենարարին» (Սոփ. Բ, 45): — Եւ  
Դուռնայ Բ Ժողովը սահմանէ. «Ի մեծ շաբա-  
թուն ճրագալուցին եթէ մշակք, եթէ տղայ,  
եթէ ծեր՝ ի տուրնջեան օրինաց (որ պահուէր  
յեկեղեցւոյ) մի հաղորդեսցի. ապա թէ ոք  
հաղորդեսցի վասն տկարութեան մարմնոյն,

այլ զարուց մէջ բազում թիւ պատարագներ լինէին : Խծկօնից ս. Աստուածածնի արձ. Ի ՈկԲ=1213 զրէ. « Սոքա (միլինքն.) հաստա տեցին զմեծ շաբաթն պատարագ, զմինն իդն. մին Յոհ. մին Նարտ. եւ մին Կոնդ. » (Այր. 113) : Եւ վայոց ձորոյ ս. Աստուածածնի վանաց արձ. Ի 22Բ=1323. « Միաբանքն տուին Բ ար<sup>\*</sup> պատարագ Հուսիկին աւագ հինգշաբթի արն » (Սխակ. 167) :

ԺԵ զարուն սկիզբը թիւ պատարագին զեռ շարունակութիւնն հաստատէ Գր. տաթեւացի քարոզագրոց մէջ. « Ի քառասորդաց պահս փակի զուռն եկեղեցւոյն, եւ արտաքոյ ազօթեմք<sup>\*\*</sup>... իսկ միև քահաւանայե ի մէնջ՝ եւս

թան եւ գինի մի իշխեսցեն ճաշակել յժամ (միակ ժամ) կատարելոյ սրբոյ (եւ միոյ) պատարագին » (Կան. 1Ա) :

\* Այդ ժամանակի արձանագրաց մէջ աչք բառը շատ անգամ գործածուի իբր գումար, եւ ոչ իրական օր. ինչպէս ներկայ օրինակիդ մէջ, ուր աւագ հինգշաբաթին մի օր է եւ երկու աչք պատարագ ունի :

\*\* Այդ սովորութեան կերպարանափոխութիւնը չէ՞ որ այժմ քառասորդաց մէջ փակ սեղանով պատարագեմք, գաւթի անձկութենէն կամ չքոյութենէն ձգելով սեղանոյ վարագոյրը՝ փոխանակ զբան եկեղեցւոյ, ինչպէս ուրեք ուրեք ընեն դանբացի հանդիսին այլ :

միայն մտեալ է յեկեղեցին եւ պատարագ գրաս. » (Ա, ՀԸ) : Բայց պատարագին իւր հետ առնոյր եւ մի սպասառք. զի այլուր աւանդէ՝ թէ « Ոչ առնեն պատարագ... առանց սպասառքի », (Ա, 1Զ) :

Ը. Յընթացս յիշեալ զարուց թիւ մատուցանւին ոչ ըրկ վանականք, այլ երբեմն եւ աշխարհիկք : Կոթայ Աստուածածնի թիւ պատարագող քահանայք (Ի յօդ. Գ) վերջնոց կարգէն էին. Գրիգոր իշխան նոյն արձանագրի մէջ յաւելու, որ եթէ թերանայք ձեր պարտուց մէջ, « Աստուած դատապարտեցէ զձեզ զաշակօք եւ զարմիւք » : Շնորհաւոյն խրատած աշխարհիկ քահանայից պատարագն (Ի յօդ. Դ) Լամբրոնացւոյն յիշած վանականաց թիւն էր : Նմանապէս մի արձնգր. Ի 2ՂԱ=1342 Սնոյ ս. Փրկչին, որ ժողովրդական եկեղեցի էր, պատուիրէ. « Սպասաւորք... մատուցին մեզ զվարդալառին կիրակէ Բ պատարագ » (հ. Ներս. 124), բնականապէս թիւ :

Ք. Սելին կայ. Յհ. մանդակունւոյ առումը մեզ հասած քանի մի անվաւեր կանոնաց \* մէջ կարգամբ. « Քահանայ՝ որ ընդ

\* Երկու կարգ են, մին եօթն թուով եւ միւսն ինն, յորոց առաջինն է մէջ բերածս :

միտում առաջ երկու պատարագ մատուցանէ, ընդ խաչահանունն եղիցի» (կան. Բ)։ Այդպիսի սովորութիւն մի հազիւ յետ ՃԳ դարու կրնար երեւել մեր մէջ\* հետեւողութեամբ լատինաց։ Բայց այս կանոնս որ դրուած է, ցուցնէ՝ թէ այդպիսի դիպուածներ այլ պատահած են մեր ազգի մէջ։

Ճ. Թիւ պատարագի դադարումն ազգէս առ այժմ դեռ յայանի չէ ինձ՝ թէ ի՞նչպէս եւ որոյ ձեռամբ եղաւ. արդեօք Ղամբրոնացոյն սկսած սովորութեան տարածմամբ միայն, թէ նոր հրամանաւ։ Գաղարման ժամանակն այլ մութ է։ Թող դրաւոր աղբերքն, որոց դեռ չեմ հանդիպած, արձանազիրք եւս Փե դարուն սկսին նուազիւ. եւ այն սակաւուց մէջ զոր տեսած եմ, պատարագաց յանձնարարութիւնք պակասին, բարեգործք բաւական համարելով խնդրել կամ օրը մի պատարագ

\* Նոյն եօթն կանոնաց մէջ կայ. «Մատուցէ տեսուն զուարակ վասն անգիտութեան եւ քաւեացէ... Գ զուարակօք սրբեսցի»։ մովսէսական օրինաց յաջգը մեր մէջ սկսաւ ի Մխիթարայ զոչէ կամ իւր ժամանակէն։ Գիտելի է նա եւ սոյն կանոնաց անգոյութիւնն հին կանոնադրոց մէջ նախ քան 1668 տարին՝ զոնէ ըստ մեր գրչագրաց։

կամ վայելողաց աղօթից օժանդակութիւնը։ Եւ Գր. տաթեացոյ վկայութիւնն ի խնդիր Բ, յօդ. Բ՝ ցուցնէր հանապազօրեայ խուռն պատարագաց ամփոփումն ի մի միայն — թէ եւ դեռ թիւ՝ ինչպէս տեսանք վերն ի յօդ. Է — նոյն իսկ իւր վանաց մէջ, յորում՝ յառաջ աւելի պատարագներ լինէին՝ նման այլ վաներու (յօդ. Գ)։ Այս երկու փորձերէս անկարելի չէ հետեւեցնել՝ թէ թիւին դադարումն եղած լինի յընթացս Փե դարու, կամ թէ ուշ՝ գոնէ ժՁին։ Եւ արդէն Փե դարուն տեսանք Հարանց անապատի մէջ լոկ երկու օր եւ հանդիսիւ պատարագելը (խնդ. Բ, յօդ. Բ)։ — Բայց հաւանական չթուի նախկին սովորութեան խոստով դադարումն առ ժամանակ մի. ՓԲ դարէն սկսած եկեղեցական տարածայնութիւնք յազգիս, եւ մի մասին միշտ յարած մնալն արեւմտեայց հետ, որոց սովորական էր իւրաքանչիւր քահանայի հանապազօրեայ թիւ պատարագը, չկարեն թոյլատրած լինել այսոր բոլորովին բարձումն մեզմէ. եւ իւր այժմեան գոյութիւնը կաթողիկեայ հայոց մէջ՝ հնոյն շարունակութիւնը կարծեմ։

## Հ Ա Մ Ա Ռ Օ Տ Ո Ւ Թ Ի Ի Ն

ՔՆՆԱԾ ԻՆԴՐՈՑՍ

Ա. Ինչպէս ընդհանուր եկեղեցին ի սկզբան, նոյնպէս եւ մեր նախնիք մինչեւ և դար չունէին սովորութիւն ամէն օր պատարագելու: Նոցա պատարագի օրերն էին՝ բաց ի տէրունականաց՝ նա եւ կիրակէ եւ ուրբաթ, եւ բոլոր մարտիրոսաց տօնք. այս մինչեւ Ե դարու վերջերը: Մարտիրոսաց տօնից ի շաբաթ ամիսփութիւն՝ ուրբաթու պատարագն այլ Զ դարուն ի շաբաթ անցած զըտնեմք: Ը դարու վերջերը մտնէ պատարագի հանապազորութիւնն, որոյ մինչեւ ի ժե դար եւ աւելի յառաջ մինչև ցժի տեւելն յայտնի է: Տարւոյն մէջ միայն քառասորդական եւ առաջաւորաց պահք չունէին պատարագ՝ բաց ի շաբաթէ եւ կիրակէէ: Հանապազորութիւնն սկսի զազարեւ իբր ժի դարուն՝ եկեղեցականաց թուլութեան պատճառաւ: Բայց դեռ ցայսօր տեւէ կաթողիկեայ հայոց մէջ:


Բ. Ամէն քահանայ ամէն օր պատարագելու պարտաւոր չէր, եւ կարող այլ չէր՝ եկեղեցոյ մէջ մի սեղան լինելուն եւ պա-

տարագն իններորդ ժամուն մատչելուն համար. այլ սահմանեալ օրերը մի մի հանդիսաւոր պատարագ մատուցանէին: Այս սովորութիւնը միշտ տեւած է աշխարհիկ քահանայից մէջ: ԺԲ դարուն հաստատուեցաւ մի նոր սովորոյթ՝ քահանայից ընդ եպիսկոպոսին կամ ի միասին պատարագելու ըստ յունաց, կամ կաղորդելու, որոյ հին ժամանակ այլ ի մեզ գոյութեան նշաններ կան:

Գ. Թիւ պատարագն հաշածանաց դարուց մէջ ինչպէս այլ եկեղեցեաց, նոյնպէս եւ մեզ սովորական էր: Բայց յետոյ այլ եւս չերեւի ի մեզ մինչև և դար. որոյ վերջերը դարձեալ նորոգուի՝ գլխաւորապէս վանականաց մէջ, եւ երբեմն աշխարհականաց այլ, օրը շատ պատարագներ մատուցանելու սովորութեամբ հանդերձ: Ղամբրոնացին հակառակեցաւ այսօր իւր մէջ սպրկած զեղծմանց համար, բայց մեք զայն դեռ տեւած գտնեմք ցժե դար ամբողջ ազգին մէջ, եւ մինչեւ ցայսօր՝ ի կաթողիկեայ հայս: Մի քահանային օրն աւելի քան մի պատարագ մատուցանելու սովորութիւնն այլ երեւած է մեր մէջ յետ ժԳ դարու:







ՄՄ Հայագիտական գրադարան



MAL047240

